# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լոկատոր ՓԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/389 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Լոկատոր ՇԿՀ | Լոկատոր | Լոկատոր ՇԿՀ | «Լոկատոր» ՓԲԸ | Կառավարման և հսկման համակարգ` ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկ (էլեկտրաշչակի հեռահար կառավարման համակարգ)` /տեղադրումով և կարգաբերումով/ 1. Հիմնական ֆունկցիոնալ պահանջներ` Ազդանշանի հեռահար ակտիվացում և ապաակտիվացում հետևյալ կապի տեսակներով` 1. GSM կապի միջոցով` զանգով և SMS հաղորդագրությամբ: 2. Համացանցի միջոցով` լարային` Ethernet և անլար` GPRS (VPN ցանցում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատելու հնարավորություն ստատիկ IP-ով)։ 3. Ազդարարման հնարավորություն՝ առանց որևէ կապի միջոց օգտագործելու՝ անմիջապես բլոկի վրա կամ առանձին տեղադրված կոճակով։ Կոճակը սեղմելով ազդարարումը կատարվում է ավտոմատ կերպով։ 4. Կուտակիչային մարտկոց՝ ցանցի խափանման դեպքում սարքի հետ կապ պահպանելու համար։ 5. Կարգավորման հնարավորություն՝ համակարգչի օգնությամբ։ 6. Շչակի ակտիվացման և ապաակտիվացման վերաբերյալ տեղեկատվության պահպանման և հաղորդման հնարավորություն։ 7. Կառավարման բլոկը պետք է ապահովի Երևան քաղաքում արդեն տեղադրված և գործող «C-40, C–40c, C-28, C3O-2» և այլ համարժեք մոդելների շչակների կառավարումը։ 8. Կառավարման բլոկի վիճակի վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ֆազերի կորստի, լարման, փոխատեղման և մարտկոցի լարման)։ 9. Շչակի գործարկման վիճակի՝ միացված կամ անջատված |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | լինելու վերաբերյալ տեղեկատվության դիտարկման հնարավորություն (ուշադրություն բոլորին, օդային տագնապ ազդանշանի կամ ազդարարման անջատման վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ նմանատիպ ազդանշանների մասին)։ 10. Կառավարման բլոկը պետք է ապահովի եռաֆազ և միաֆազ շչակների կառավարումը։ 11. Կառավարման բլոկի ծրագրային թարմացումների հնարավորություն։ 12. GSM ալեհավաք՝ անլար կապի որակի ապահովման համար։ 13. Սարքը պետք է ունենա առնվազն 2 տեսակի ազդարարման հնարավորություն (առանց վերածրագրավորման/վերակարգավորման)՝ Օդային տագնապ (ընդհատումներով ազդանշան), Ուշադրություն բոլորին (չընդհատվող ազդանշան), ինչպես նաև հետագայում ազդարարման հրամանների տեսակների ավելացման և փոփոխման հնարավորություն 2. Տեխնիկական պահանջներ 1. Հիմնական տպասալ։ 2. Ավտոմատ անջատիչ՝ առնվազն C 40A (380 և 220 Վ լարմամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատելու հնարավորությամբ): 3. Մեխանիկական կոնտակտոր 18-22 Ա: 4. Անխափան սնուցման բլոկ (հոսանքի լարման կարգավորիչ): 5. Կուտակչային մարտկոց 12 Վ, 1.2 Ա*ժ: 6. GSM ալեհավաք (լարի երկարությունը մինչև 500 սմ): 7. Սարքը պետք է ունենա 380 և 220 Վ լարմամբ աշխատելու հնարավորություն: 3. Բլոկի չափսերը, քաշը և այլ պահանջներ 1. Բարձրություն՝ մինչև -100 սմ: 2. Լայնություն՝ մինչև -50 սմ: 3. Խորություն՝ մինչև -40 սմ: 4. Քաշ՝ մինչև -15 կգ: 5. Նյութ՝ մետաղական 6. Ներկ՝ փոշեներկված կամ ներկված: 7. Պաշտպանվածությունը՝ IP 65: 4. Տեղադրման պահանջներ՝ 1. Սարքն անհրաժեշտ է տեղադրել 1.5–2մ բարձրությամբ, գործարկման համար հասանելի վայրում: 2. Նախքան հաղորդալարերի միացումը ստուգել ֆազերի հերթականությունը և համապատասխանությունը նոմինալին: 3. Ֆազերը միացնել այնպես, որ ելքերի և մուտքերի հերթականությունները համապատասխանեն միմյանց: 4. |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛОКАТОР закрытое акционерное общество в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/389 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | Սարքը պետք է ունենա հողանցում ապահովող սեղմակ: 5. Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է` մալուխների անցկացում, միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչափին): 6. Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են` մալուխներ` 5x2.5 մմ2 պղնձե հաղորդալար միաֆազ հոսանքի համար, 5x4 մմ2 պղնձե հաղորդալար եռաֆազ հոսանքի համար, մալուխների ամրացման համար անհրաժեշտ պարագաներ` պտուտակ, հեղույս (болт), տափողակ (шайба), մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների` հենակի կամ այլ հարմարանքի պատրաստում: 7. Տեղադրման վայրի GPS կոորդինատի տեղորոշում, տեղադրված էլեկտրաշչակի լուսանկարում 2-3 հատ, սարքի սերիական համարի տրամադրում ըստ տեղադրման վայրի): 5. Կարգաբերում և միացում 1. Սարքը ցանցին միացնելուց հետո տեղադրել տրամադրված երկու SIM քարտերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | և անհրաժեշտության դեպքում միացնել մալուխային LAN կապը: 2. Ստուգել կապի առկայությունը (SIM1, SIM2, անհրաժեշտության դեպքում LAN): 3. Սարքը կարգաբերել, ստուգել սարքի աշխատանքը: 4. Մատակարարը պետք է Երևանի քաղաքապետարանին և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրի սարքի կառավարման ծրագրային փաթեթը (փաթեթներ) և տվյալների փոխանակման պրոտոկոլը: 5. Բոլոր չափաբաժինների համար երաշխիքը և սպասարկումը առնվազն 2 տարի: |